ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

N 0211 19063

«24» 11 2025թ.

ՀՀ ՆԳՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԱ ՖԻԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՝ պարոն Ֆիդանյան,

Հայտնում եմ, որ Գյումրի քաղաքի Պ.Սևակ փողոց թիվ 8 շենքի N 1/1 հասցեի տարածքը հանդիսանում է Գյումրի համայնքի սեփականությունը: Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 107-Ա որոշմամբ նշված տարածքը 352,1 քառակուսի մետր մակերեսով անհատույց օգտագործման է տրամադրվել Հայաստանի Հանրապետության Ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Շիրակի մարզային ստորաբաժանմանը (այսուհետ ստորաբաժանում) 25 տարի ժամկետով: Կադաստրի կոմիտեի կողմից նշված տարածքը ստորաբաժանման անվամբ պետական գրանցում չի ստացել: Համայնքապետարանի կողմից տարածքը բաժանվել է երկու առանձին մասերի համապատասխանաբար 262,3 քառ.մետր մակերեսով, որը օգտագործվում է ստորաբաժանման կողմից և 89,80 քառ.մետր մակերեսով որը օգտագործվելու է համայնքի կողմից այլ նպատակների համար:

Նշված հարցին լուծում տալու համար անհրաժեշտ է վերը նշված որոշման մեջ կատարել մակերեսի համապատասխան փոփոխություն, որից հետո վարչության կողմից լիազորված անձի և Գյումրի համայնքի միջև պետք է կնքվի տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր, որից հետո փաստաթղթերի փաթեթը պետք է ներկայացնել կադաստրի կոմիտե իրավունքի պետական գրանցման համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025-11-24 11:52:18 GMT+4
Հավաստված է EKENG-ի կողմից

Կատարող՝ Կ.Մխիթարյան
Ս.Գրիգորյան